

պարհի վրա եւ որ այսօր էլ գոյութիւն ունի եւ պարսկերէն լեզուով կոչուում է «Ղասը Շիրին», ընդհակառակը. սիրոյ, համոյժի եւ զարմուրթեան վայր էր: Նրա հիմնադիրը, ճիշտ որ մի հայ իշխանուհի է եղել Արշակունեանց տոհմից, անունը Անուշ (Շիրին), արտակարգ գեղեցկուհի, մարպիկ, լաւ որտրոյ, որին սիրել է պարսից հոսրով Փէրվիզ քագաւորը, Արդարադատ Անուշիրվանի թոռը, որ գահ բարձրացաւ Քրիստոսի 590 թւին: Ուրեմն Անուշ բերդը շինել է Քրիստոսի 590 թւից յետոյ իշխանուհի Անուշի կողմից, որի անունով ե՛ւ կոչւել է Անուշ բերդ, Ղասըը Շիրին: Այդ բերդում են անցկացրել սիրով արբշտ իրենց օրերը Սասանեան հոսրովը Արշակեան Անուշի հետ: Յայտնի պարսիկ բանաստեղծ Նիզամի ճիւրիւն է նրանց սիրոյ հավերժութեան մի ընդարձակ քերթում «հոսրով եւ Շիրին» վերնագրով:

Եզրակացութիւն - մեր գրողների մեծ

մասը չեն սխալւել, որ այն բերդ-բանտը, ուր նետուած է եղել Արշակ Բ. Արշակունին, հայոց քագաւորը, կոչել են «Անյուշ բերդ», «Ղասըը Ֆէրամուշ» եւ ո՛չ թէ Անուշ բերդ, Ղասըը Շիրին, մենք էլ պէ՛տք է հետեւինք մեր գրողների մեծամասնութեան:

Մեր մեծ վիպասան Բաֆֆին էլ կարծել է. որ Արշակ Բ. բանտարկուած է եղել Ղասըը Շիրինում, Անուշ բերդում, դրա համար էլ գրում է. «անունը քաղցր, բայց ինքը լիք դառն յիշողութիւններով»: Ո՛չ, Անուշ բերդը ո՛չ միայն անունն է քաղցր, այլ ե՛ւ ինքն էլ լիքն է եղել քաղցր յիշողութիւններով, սիրոյ եւ համոյժի, երջանկութեան եւ զինբքութի յիշողութիւններով: Դառն յիշողութիւններով լիքն էր *Անյուշ բերդը, Ղասըը Ֆէրամուշը*:

Շապուհ Բ. տիրում էր Քրիստոսի 309-379 թւերին: Անուշ բերդը շինուած է Քրիստոսի 590 թւից յետոյ:

Թեհրան ԳՐԻԳՈՐ ԵՂԵԿԵԱՆ

ՄԻ ՀԻՆ ԹԹՈՒՑԻՅԻԿ

«Վէմ»-ի առաջին գրում տպագրուած թժ. Միք. Զալեանի համառօտ յուշերում, ի միջի այլոց, ասում է.-

«Հայրենասէրների Միութիւնը» հրատարակել է պարբերաբար. քէպէտ եւ անկանոն կերպով, մօտաւորապէս հինգ համար իր բառացիկներին, մինչեւ 1885-86 ուսումնական տարւոյ վերջը, երբ հիմնադիրների Մոսկուայից հեռանալու եւ զանազան կողմեր ցրւելու պատճառով, հայկական ազգասիրական-յեղափոխական գործունէութեան կենտրոնը անցնում է Թիֆլիս, ուր, Բիշ յետոյ, հիմնուում է, ինչպէս վերը ասացինք, Հ. Յ. Դաշնակցութիւնը» (էջ 114-15):

Ռուս յեղափոխական կազմակերպութեան բերան«Նարոզմայեա Վոլեան»-հանդէսի 1885 թ. № 10-11-ի մէջ քաղա-

ծօրէն բերում է հայերէն մի բառացիկ, որը, անկասկած, հանդիսանում է «Հայրենասէրների Միութեան» հրատարակած բառացիկներից մէկը: «Նարոզմայեա վոլեան»-յի խմբագրութիւնը հրատարակել է այդ բառացիկը հետեւեալ նախաբանով.-

«Տպագրում ենք քարգմանաբար մէկ-երկու քաղածֆներ հայկական մի կոչից, որ լոյս է տեսել 1885 թ. փետրուար 22-ին, նօր կազմուած հայ յեղափոխական խմբակի (*կրուժակ*) կողմից»:

Ահա այդ բառացիկը.-

«Եղբայրներ եւ ճոյրեր,

Այսօր Ձեր բոլորի աչքի կատարում է ահաւոր գագաւորեան մի փաստ, որ վայել է քաշիբոգութիւնների վայրենու-

քեան-բարբարոս բռնութեան մի փաստ, որ յատուկ է վաղուց անցած ժամանակների սանձարձակութեան, ազազակոյ անարդարութեան մի փաստ, որ անազակների անեքեսութեան կնիք է կըրում:— Ռուս միացեցութիւնը փակուի է մեր դպրոցները.....

Սքափեցե՛ք: Եւ եթէ այժմ մենք զեռի վիճակի չենք բացայտօրէն բողոքելու նենգ բռնաւորի դէմ, գոնէ կարող ենք մահուան դատապնէիտ արձակել այն ստոր չարագործներին, որոնք սողում են նրա ոտների տակ եւ մեր հայրենիքը դատապարտել են ոչնչացման.....»

Հիմքերը, որոնց համաձայն գտնուի ենք, որ այս բողոքիկը պատկանում է «Հայրենասէրների Միութեան», մէկից անոյն են:

«Հայրենասէրների Միութիւնը» գըտնըւում էր ռուս նարդնիկների գաղափարական մի այնպիսի ազդեցութեան տակ, որ, ինչպէս ասում է բժ. Զայեանը՝ «կազմում է առաջին բողոքիկը, խմորատիպով տպագրւած, այն ժամանակուայ ռուս արմատական յեղափոխականների ծրագրով» (Զայեանը նկատի ունի «Զեմլեա ի վոլեա»ն, որը ընդհատուց ծնունդ տալով «Նար. վոլեա»-յին): Այսպիսով, ուրեմն, «Հայրենասէրների Միութիւնը» իր առաջին «դեկլարացիայով» որդեգրում է ռուս նարդնիկների ծրագիրը, ինչպէս ասում է բժ. Զայեանը, «յարմարեցրած, ի հարկէ, ընկերութեան մասնաւոր նպատակներին»:

Այս գաղափարական կապի եւ համալըրամբի հետեւանքով բնական է, որ «Նարդնայեա վոլեա»յի խմբագրութիւնը տեղ տար իր ամսագրում յիշեալ բողոքիկին յատկապէս իրրեւ հայ գաղափարակիցների մի գրութեան:

«Հայրենասէրների Միութիւնը», ինչպէս նաեւ «Զեմլեա ի վոլեա»յի գաղափարների ազդեցութեամբ կովկասում

ստեղծւած յեղափոխական տրամադրութիւններն ու շարժումը վերածուում են խմբակցութիւնների, որոնք ռուսերէն Զայեանը որակում է «կրուժոկ»: Այս նոյն բառով է անուանում նաեւ «Նարդնայեա վոլեա»յի խմբագրութիւնը վերը յիշատակած բողոքիկի հեղինակ «նոր յեղափոխական խմբակցութիւնը» (կրուժոկ): Այսպիսով տարակոյս չի մնում, որ բողոքիկը գործն է այդ շրջանում ստեղծւած կրուժոկներից մէկի, որոնցից ձեւակերպուածը «Հայրենասէրների Միութիւն»ն էր:

«Հայրենասէրների Միութիւնը» քեւ ստեղծուի է «տանկահայ ազգակիցների վիճակի մասին հոգալու» յատուկ նըպատակով, բայց նկատելով, որ այդ բանածեր ժամանակին իր մէջ պարփակում էր համայն ազգային քաղաքականութիւնը, անյարիւր է կարծել, թէ «Հայրենասէրների Միութիւնը» կարող էր գանց առնել համազգային մի այնպիսի ազէտ, ինչպիսին հայ դպրոցների փակումն էր, եւ չարտայայտել այդ մասին իր հինգ բողոքիկներից մէկի մէջ: Ամէն պարագայի տակ «Հայրենասէրների Միութեան» գոյութեան ու գործունէութեան շրջանը (1882-1886) այնքան էլ նարուս չէ համազգային արժէք ունեցող դէպքերով, որոնց մէջ կարելի լինէր գանց առնել մի ցնցող դէպք:

Վերջապէս, ինդրոյ առարկայ օրերին, այսինքն 1885 թ. փետրարին, «Հայրենասէրների Միութիւնից» գատ, ոչ մի ուրիշ գաղտնի յեղափոխական «խմբակցութիւն» չկար հայ կեանքում, որին կարելի լինի վերագրել վերը բերւած բողոքիկի հրատարակութիւնը: Նախ քան այդ, Արեւմտեան Հայաստանում կազմւած գաղտնի ընկերութիւնները (Վան, 1872 թ. «Միութիւն ի Փրկութիւն» էրգրում, 1882 թ. «Գաղտնի ընկերութիւն Բարձր Հայոց») արդէն քայքայուած ու լուծուած էին, իսկ

Արմենականների քերթի («Արմենիա») առաջին քիւր լոյս տեսաւ 1885 թ. օգ. 1-ին միայն:

Սակայն, բացի այդ, յիշեալ բառացիկը ամէն տեսակէտով անհարգատ է Արեւմտահայ յեղափոխութեան տրամադրութիւններին: Արեւմտահայ յեղափոխականները կանամ ին կեանքի ու գոյութեան ցաւատանց հարցերով, որոնք իրենց ծանրութեամբ չոքնի էին նաեւ կովկասահայութեան յեղափոխական մտքի ու խղճի վրա:

Այս տեսակէտով, «Նարոզնայեա Վոլեա»-ի մէջ տպւած բառացիկը իր ժամանակի համար նորութիւն է. եւ *ուս միապետութեան դէմ ուղղւած անդրաշիկ թուարկն է:*

Մէկ-երկու խօսք էլ այն մասին, քէ ինչո՞ւ այդ բառացիկը լոյս է տեսել 1885 թ. փետրար 22-ին, քանի որ հայկական դպրոցների փակումը տեղի է ունեցել քիչ աւելի ուշ, այսինքն՝ նոյն քի մարտին:

Հայկական դպրոցների խնդիրը կանավարական շրջաններում ծեծում էր դեռ 1884-ի փետրարից սկսած: Այդ քի փետր. 16-ին ներքին գործոց նախարարութեան կողմից կազմւած «կանոնների» համաձայն էջմիածինը գրկւում էր իր մինչեւ այդ ունեցած իրաւունքներից, եւ հայկական դպրոցները ենթարկւում էին պետական ուսումնարանական իշխանութեան հակաշիջին՝ քէ նիւթական եւ քէ բարոյական տե-

սակէտով: Վէճը այդ առթիւ էջմիածնի եւ պետական պատշաճ հաստատութիւնների միջեւ տեսում է մինչեւ յաջորդ տարւայ փետրարի 8-ը երբ ներքին գործոց նախարարութիւնը վերջնագրի ձեւով պահանջում է էջմիածնից երկու շաբաթւայ ընթացքում ենթարկել եւ գործադրել 1884 թ. փետրար 16-ի կանոնները, սպառնալով հակառակ դէպքում փակել հայկական դպրոցները:

Քանի որ նախապէս յայտնի էր էջմիածնի բացասական դիրքը այդ պահանքի նկատմամբ, վերը յիշատակւած բառացիկի հեղինակները ներքին գործոց նախարարութեան վերջնագիրը իրաւամբ համարել են հայկական դպրոցների փակման ակտ եւ արտայայտել են այդ առթիւ:

Բիլգրադ.

Վ. ՄԻՆԱՍՏՐԱՆԱՆ

Խմբագրութեան կողմից.— «Նարոզնայեա Վոլեա»-ում հրատարակւած բառացիկը կարող է լինել եւ մէկը այն 2-3 բառացիկներից, որոնք 1885 թ. հրատարակւեցին Անդրկովկասում իրրեւ բողոք հայկական դպրոցների փակման դէմ: Այդ բառացիկների մասին յիշում է Քր. Միքայէլեանը իր յուշերում, ուր ասւած է նաեւ, որ այդ բառացիկներից մէկը գրւած է Գարբ. Միրզոյեանի եւ իր կողմից. («Հայրենիք» ամս., 1924 թ. № 10, էջ 59):

